

**«Ուիգմոր կանանց և երեխաների հիվանդանոց»**  
Հ. Ներսիսյան 10/7, Երևան 0014,  
+374 12345678

**«Ուիգմոր ընտանիքի առողջության կենտրոն»**  
Պուշկին 56, Երևան 0002, Հայաստան  
+374 12345677

[www.wigmore.am](http://www.wigmore.am)


ՀԻԴՐՈՑԵԼԵ

ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ  
ՇՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



**ԱՄՈՐԶՈՒ ԹԱՂԱՆԹԵՐԻ ՋՐԳՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ԴԻԴՐՈՑԵԼԵ**

Ամորձու թաղանթների ջրգողությունը փոշտում (ամորձապարկում) ամորձու շուրջ հեղուկի կուտակումն է: Այն կարող է լինել բնածին և ձեռքբերովի:



Բնածին ջրգողության դեպքերի մի մասն ինքնուրույն կարող է անցնել կյանքի առաջին 1-2 տարիների ընթացքում:

Ձեռքբերովի ջրգողության պատճառ կարող են լինել փոշտի շրջանի վնասվածքները, բորբոքումները, գոյացությունները և այլն:

**ԱՄՈՐԶՈՒ ԹԱՂԱՆԹԵՐԻ ՋՐԳՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ԴԻԴՐՈՑԵԼԵ**

Ամորձու թաղանթների ջրգողության ժամանակ դիտվում է փոշտի (ամորձապարկ) չափերի մեծացում: Այն սովորաբար անցավ է, շոշափեյիս զգացվում է հեղուկի առկայությունը: Երբեմն օրվա ընթացքում կարող է դիտվել ջրգողության չափերի փոփոխություն. առավոտյան այն սովորաբար փոքրանում է, կարող է նույնիսկ աննկատ դառնալ, իսկ երեկոյան ժամերին՝ ավելի արտահայտված:

Ջրգողության կասկածի դեպքում պետք է դիմել մանկական վիրաբույժի: Նա զննումով կարող է ախտորոշել ջրգողությունը:



Բնածին հիդրոցելի ժամանակ սովորաբար բժիշկը խորհուրդ է տալիս սպասել մինչև երեխայի 1-2 տարեկան հասակը՝ միաժամանակ հետևելով ամորձու չափերի փոփոխություններին: Եթե մինչև նշված տարիքն այն ինքնուրույն չի անցնում, ապա բալկին վիրահատում են:

Ձեռքբերովի հիդրոցելի դեպքում բուժումը միայն վիրահատական է: Վիրահատությունը կատարվում է ընդհանուր անզգայացման պայմաններում:

**ՍՈՒՐ ՋՐԳՈՂՈՒԹՅՈՒՆ**

Երբեմն երեխայի մոտ կարող է կարճ ժամանակահատվածում դիտվել ամորձապարկի չափերի կտրուկ մեծացում և ցավոտություն: Սա սուր ջրգողություն է: Նման դեպքերում անհրաժեշտ է անհապաղ դիմել մանկական վիրաբույժի:

**ԵՐԲ Ե ՑՈՒՑՎԱԾ ՎԻՐԱՋԱՏՈՒԹՅՈՒՆԸ**

Ամորձու թաղանթների ջրգողությունը անհրաժեշտ է վիրահատել, եթե՝

1. Ջրգողությունն ինքնուրույն չի անցել երեխայի 1.5-2տ. լրանալուց հետո:
2. Ախտորոշվել է ձեռքբերովի հիդրոցել:



**ՈՒԻԳՄՈՐ՝ ԴԻՎԱՆԴԱՆՈՑ, ՈՐ ՍԻՐՏ ՈՒՆԻ...**

